




Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
նչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Պրոլետարների բոլոր լեհերների միացե՛լ:

ՀԻՆԱՏՈՒԿԱՌԻԹՅՈՒՆ ԼՈՒՍԱՇԽ ԱՐՀՄԻՈՒԹՅԱՆ
ՀԱՅՍՏԱՆԻ ԿԵՆՏՐԱԼԶՈՒԹՅԱՆ

Ա. Ա. ԿՈՐՈՍՏԵԼԵՎ

ՈՒՍՈՒՑԻՉՆ ՈՒ ԱՐՉԱՐԺՈՒՄԸ

Թարգմ. Պ. Ք.

371.1
4-78

Պետհրատի 4-րդ տպարանի կենդանացում
1926

308

Ե. Ս. ԿՈՐՈՍՏԵԼԵՎ

371.1

4-78

1003
93958

ՈՒՍՈՒՑԻՉ
ՈՒ
ԱՐՅԵԱՐԺՈՒՄԸ

Քարզմ. Գ. Բ.

03 84142

10143

Լ Ե Ն Ի Ն Ա Կ Ա Ն
1926

[24 MAY 2013

47.190

1 MAR 2010

ՈՒՍՈՒՑԻՉՆ ՈՒ ԱՐՅԱՐԺՈՒՄԸ

ԶԵՎՈՒՅՈՒՄ I ՀԱՄԱՌՈՒՍԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ

Ընկերներ, իմ զեկուցման գործնական խնդիրներին
առաջին համառոտակի կանգ կառնեմ
այն հարցի վրա, թե ի՞նչպես ե առաջ յեկել մեր մի-
ությունը: Համառոտական ուսուցչական այս I համա-
գումարի առաջ ավելորդ է մի հետադարձ հայացք
ձգել և տեսնել թե վճռադրից ե ծել և աճել մեր
ավելի քան կես միլիոնանոց համախմբությունը—մեր
միությունը:

Ընկերներ, մեր միությունը մեկն ե բանվոր դասա-
կարգի ընտանիքի այն յերիտասարդ միություններից,
վորոնք ամբողջովին կանգնել են հեղափոխական դա-
սակարգային կուլի տեսակետի վրա: Սակայն ուսուց-
չական միջավայրում սկսած շարժումն ավելի մեծ վա-
ղեմնություն (Давнось) ունի: Ուսուցչական համա-
խմբությունը առաջ ե յեկել դեռ 60-ական թվական-
ների վերջին: Այս համախմբությունը փոխադարձ ոգ-
նություն ընկերության կերպարանք ունեւ: 1905 թվին
80 այդպիսի համախմբություն կար. իսկ 1914 թվին՝
102 համախմբություն՝ 45,000 անդամներով, վորոնցից



54148-66

Գրադարար 216. Պատ. № 686. Տիրաժ 2,500

Պետհրատի IV սպարան Լենինականում 1926 թ.

40,000-ը մենակ ուսուցիչներ եյին: Այս համախմբութունները իրենց նպատակ եյին դնում փոխադարձ ոգնությունը, փոխադարձ ռժանդակությունը: Այս ընկերությունների ուշադրության կենտրոնը կազմում էր վոչ դասակարգային կռիվը և վոչ ել կապիտալիստական հասարակարգը տապալելու խնդիրը, մի հասարակակարգ, վորը բանվորական ուժի գնորդ է հանդիսանում: Նրանք գլխավորապես ուշադրություն եյին դարձնում, վոր բուրժուական հասարակության շրջանակներում կապիտալիստական սեփական ուժերով, սեփական միջոցներով ոգնե իրենց և ուսուցչությանը:

Ցարական ինքնակալությունը հնարավորություն չէր տալիս, վոր գոյություն ունենան այնպիսի արհեստակցական համախմբություններ, վորպիսիներն այժմ տեսնում ենք մեզ մոտ, կամ վորպիսիները գոյություն ունեն Արևմուտքում, վորտեղ բանվոր դասակարգը համառկովով ձեռք է բերել արհմիություններ կազմակերպելու իրավունք: Ցարական ինքնակալությունը բանվոր դասակարգին, նրա հետ նաև ուսուցչությանն իրավունք չէր տալիս մարտական արհմիություններ կազմակերպելու: Նրան թողել եյին լոկ մի նեղ բնագավառ՝ խնայողական գանձարկիչների կամ փոխադարձ ոգնության շուրջը համախմբվելու հնարավորություն— ահա այն ձևերը, վորոնք այն ժամանակ թույլատրված եյին:

Մինչև 1905 թիվը բանվոր դասակարգը հնարավորություն չուներ արհեստակցական միություններ կազմակերպելու: Այսպիսի կազմակերպությունները ծանոթ չեյին մեզ: Չի կարելի յերևակայել, թե կարող է լինել մասսայական, բացահայտ, արհեստակցական

դասակարգային մարտական կազմակերպություն՝ առանց որինական (լեզալ) գոյության իրավունքի: Ահա թե ինչու, ընկերներ, մենք այս առաջին ուսուցչական համախմբություններն ամենեին չենք կարող արհեստակցական շարժման սկիզբ համարել:

1905 թվին, հեղափոխության ժամանակ ծագեց ուսուցիչների և ժողովրդական լուսավորության գործիչների համառուսական միությունը, վորը սակայն կանգնած չէր բանվոր դասակարգի կռվի անհրաժեշտության տեսակետի վրա: Իր ծրագրի եյությամբ՝ այս միությունը մոտենում էր աշխատավորականներին (տրուդովիկ) ժողովրդական սոցիալիստներին, կադետներին: Հետո այս միության ներկայացուցիչները Փետական Դումայում հիշյալ քաղաքական խմբավորումներին եյին պաշապանում:

Սակայն համառուսական ուսուցչական այս համախմբությունն էլ ինքնակալության հարվածներից տապալվեց 1907 թվին:

Սակայն մինչև 1914 թվականը ուսուցչական համախմբությունների միակ ձևն էլի փոխադարձ ոգնության ընկերություններն եյին, վորոնք իրենց նպատակ եյին դրել՝ կազմակերպել ուսուցչական տներ, գրադարաններ, երևույթներ, իրանց զառամյալ անդամներին ոգնություն հասցնելը և այլն:

Փետրվարյան հեղափոխությունից հետո ծագեց համառուսական ուսուցչական միությունը, վորը իր ձգտումներով սակայն դարձյալ կանգնած էր բանվոր դասակարգի շարքերում: Այս միությունն, ընկերներ, շատ լավ ծանոթ է ձեզ բոլորիդ. դուք գիտեք այն տխուր դիրքը, վոր նա խաղաց հոկտեմբերյան հեղափոխության

ժամանակ՝ թշնամական դիրք բռնելով սրա վերաբերմամբ:

Այս մասին բավական շատ են խոսել և բավական շատ գրել:

Լուսավորականներից յուրաքանչյուրը լավ գիտե այս ժամանակաշրջանի մասին:

Յեւ այս շրջանի վրա կանգ չեմ տռնիլ:

Լուսավորութեան աշխատավորների, մասնավորապէս ուսուցչութեան արհեստակցական համախմբութեաններն սկսվում են միայն հոկտեմբերյան հեղափոխութեան բոլոր բարքերը, յերբ սոցիալ-տնտեսական և քաղաքական բոլոր հարցերը յերևան յեկան իրենց ամբողջ մերկութեամբ, յերբ դասակարգային հակասութեանները չափազանց սրված ելին: Ուսուցչութեանը դրված էր՝ դասակարգային վրոշ դիրք բռնելու անհրաժեշտութեան հանդեպ:

Առաջավոր հեղափոխական ուսուցչութեանը, վոր հասկանում էր հոկտեմբերյան հեղափոխութեան նշանակութեանը, վոր կանգնած էր հոկտեմբերյան հեղաշրջման տեսակետի վրա, ուսուցչութեան այս մասը կազմակերպեց հոկտեմբերի սկզբունքների վրա կառուցված, իրեն հակակշիռ համառուսական ուսուցչական միութեան, մի այլ միութեան:

Համալուսաշխի ստեղծվելուց առաջ, 1918 թ. ծագում է ուսուցչիների Համառուսական Կոմմունիստական միութեանը, վորը բացահայտ ընդդեմ է կանգնում Համառուսական ուսուցչական միութեանը:

Սակայն ուսուցչական Համառուսական Կոմմունիստական միութեանն էլ չկարողացավ իր շուրջը համախմբել լայն մասսաներ՝ վոր չափով վոր քաղաքա-

կան պահանջներ էր առաջադրում յուրաքանչյուր նոր մտնող անդամին:

Այնուհետև հաջորդաբար ստեղծվեցին ինտերնացիոնալիստ ուսուցչիների միութեանը և լուսավորութեան ու սոցիալիստական կուլտուրայի աշխատավորների միութեանը: Այս յերկու կազմակերպութեանները կազմում էին ծայրագույն թեւերը: Այս թեւերում կանգնած էր ուսուցչութեան մի մասը միայն. իսկ հիմնական մասան կազմակերպված չէր, վորոհետև չէր կարողանում ըմբռնել կոմմունիստական գաղափարները: Համենայն դեպս, այս միութեաններն ամբողջ ուսուցչութեան միասնական կենտրոնի դերը կատարել չկարողացան:

Լենինն արհմիութեանների խնդիրներին մասին գրում էր. «Արհմութեանները, վորոնք սիստեմատիկ կերպով հոգում են բանվորների կենցաղի բոլոր կողմերի մասին՝ ինչպես գործարանում, այնպես էլ նըրանից դուրս աշխատավորների ամենալայն և նույն իսկ հետամնաց մասսաների համար կարող են քաղաքական դաստիարակութեան կազմակերպչական արտադրական ընտելութեանների սկզբնական դպրոցներ հանդիսանալ: Իրենց այն խնդիրների իրագործման աջողութեան համար՝ արհմիութեաններն ամենից առաջ պետք է դառնան այնպիսի կազմակերպութեաններ, վորոնց մեջ յուրաքանչյուր առանձին անդամ ներկայանում է իրեն միութեան ընդհանուր կյանքի գիտակից և ակտիվ մասնակցող:

Վորովհետև այս գիտակցութեանը չկար, վորովհետև ուսուցչական ընտանիքի յուրաքանչյուր անդամ տարբեր ուղղութեամբ էր մտածում, ուստի պարզ է,

վոր քաղաքական, կուսակցական և ուրիշ հատկանիշների համեմատ ուսուցչությունը մի կազմակերպություն մեջ համախմբելն անկարելի չէր:

Բայց ընդամենը ընկեր Լենինն ասում էր, թե «Արհմիություններն իբրև կոմմունիզմի դպրոց, պետք է ծառայեն աշխատավոր մասսայի ամենորոյա կյանքի բոլոր կողմերին՝ հետզհետե պետական շինարարական գործի մեջ գրավելով աշխատավորների ամենալայն խավերը, սրանց ուղին միշտ լուսավորելով մեր ծրագրի գաղափարներով, սրանց տանելով մասնավորից դեպի ընդհանուրը, սրանց աստիճանաբար բարձրացնելով անկուսակցականությունից դեպի կոմմունիզմ»:

Արհեստակցական կազմակերպություն խնդիրն այն է, վոր բարձրացնի բանվորին, բարձրացնի ուսուցչին անկուսակցականությունից դեպի կոմմունիզմ, և այս չափազանց մեծ նշանակություն ունեցող խնդիր է: Լենինն ասում է. «Միությունը կոմմունիզմի դպրոցն է»: Բայց բանվորին և ուսուցչին կոմմունիստ դարձնելու համար ժամանակ է պահանջվում. սրա համար միություններն ամենորոյա աշխատանքի պրակտիկայով պետք է վերադաստիարակեն իրենց անդամներին:

Ընկեր Լենինն ասում էր, թե պրոլետարիատի դիկտատուրայի պայմաններում այս դաստիարակություն ելությունն այն է, վոր յուրաքանչյուր բանվոր, յուրաքանչյուր վաստակյալ խորհրդային ու տնտեսական գործնական աշխատանքի քաջվի, վորպեսզի ամբողջ հասարակական կյանքում, վորտեղ Ս. Ն. Ն. Մ.-յան գլուխ է կանգնել բանվոր դասա-

կարգը, իրենք վաստակյալներն ակտիվ մասնակցություն ունենան նրա շինարարություն մեջ:

Այս պայմաններում ի՞նչ դեր է հատկացրած միությանը: Միությանն այստեղ պատկանում է ամենագլխավոր դերերից մեկը: Նա՛ առանց քաղաքական և կրոնական հայացքների խտրություն, ոգնում է յուրաքանչյուր բանվորին գործնականապես անցնելու կոմմունիզմի այս դպրոցը:

Այս միության մեջ բանվորներն իրենց տնտեսական շահերի պաշտպանությունն են գտնում, վորովհետև բանվորն ու գործավորը գնում են միություն վոչ թե նրա համար, վոր քարոզներ լսեն, այլ նրա համար, վոր այս միությունից վորոշ ոժտնդակություն ու ոգնություն ստանան. միայն այն ժամանակ, յերբ միությունն ոգնում է, յերբ թեթևացնում է գործավորի նյութական վիճակը, յերբ նա հոգ է տանում վորն էլ կյանքի մասին, պաշտպանում է նրան չափազանց շահագործումից, յերբ պահպանում է նրա աշխատանքը—միայն այն ժամանակ է միությունն իսկական պաշտպան դառնում և միայն այն ժամանակ է մասսաներին հասկանալի լինում: Մասսաների հետ սերտ փոխհարաբերություն հաստատել, նրանց ամենորոյա կարիքներին ուղիղ մոտեցում ունենալ, գործավորներին դասակարգային դաստիարակություն տալ, իրենց կյանքի համար մղվելիք կովում այս միությանն անելիքը: Նրանց վարժեցնել կազմակերպության՝ ահագին և ամենամեծ կարևորություն ունեցող խնդիր է այս:

Մեր միությունն ամենից ավելի յե ցրված, փոշիացած: Լուսավորություն աշխատավորները համա-

խմբված չեն խոշոր արտադրութեան մեջ: Այս պատճառով մեր միութեանը չի կարող համախմբութեան գործն այնպես հեշտ իրագործել, ինչպես մյուս միութեանները: Չե՞ վոր գյուղական դպրոցը վոչ ֆարքրիկա յե, վոչ ել Պուտիլովի գործարան:

Վերցրեք խոշոր արտադրութեանների մետաղագործներին: Պիտերում (Լենինգրադում) մինչև պատերազմը հաշվում էին հարյուր հազարավոր մետաղագործներ: Ներկայումս, իհարկե, նրանք ավելի քիչ են: Իսկ մեզ մոտ 250 հազար ուսուցիչներ ցրված են ամբողջ Խորհրդային Միութեան վիթխարի տարածութեան վրա: Վերցրեք այս յերկու գուգահեռները.— մի կողմից՝ այնպիսի փոքրիկ հողամասի վրա մենակ Պիտերը համախմբում է քանակութեամբ մեր ամբողջ Միութեան զրեթե կեսը. մյուս կողմից՝ ուսուցիչները, վորոնք ցրված են հազարավոր վերստ տարածութեան վրա:

Իհարկե՝ ուսուցիչները չունեն այն կապը, այն կուլեկտիվ վոգին, չունին այն կուլեկտիվ գոգումը, վոր ունեն մետաղագործն ու հանքագործը: Այս ցրված ու փոշիացած ահագին բանակը միաձուլելու, կազմակերպելու դժվարութեանն այն է միութեան համար, վոր մենք պետք է աշխատենք բացառիկ պայմաններում՝ այս կազմակերպչական աշխատանքին նվիրելով բացառիկ ուշադրութեան:

Մեր միութեանը ծագել է 19 թվին: Այն բանից հետո, յերբ ուսուցիչը ապրից անցողիկ մոմենտների ամբողջ ետապներ, յերբ ուսուցչական մասացյի մեջ խոր մտան հեղափոխական և հակահեղափոխական դադափարներ, յերբ ուսուցչութեանը հեղափոխական

պրոցեսսի ընթացքում մասերի յեր ծվատվում, յերբ մի մասը գնում էր բանվոր դասակարգի յետից, իսկ մի մասը իբրեւ պոչ քաշ էր դալիս, բանվոր դասակարգի թշնամիների յետից, ահա այս բոլորից հետո վերջև վերջո կազմակերպվեց մի խմբակ ամենասերտ ընկերներից, վորոնք ղեկավարութեանն իրենց հզոր ձեռքն առան: Նրանց հաջողվեց 1919 թվին ստեղծել՝ լուսավորութեան աշխատավորների համառուսական միութեան, վոր կազմակերպվեց արտադրական սկզբունքի համաձայն:

1919 թվականը հանդիսանում է լուսավորութեան աշխատավորների արհարժման իսկական պատմութեան սկիզբը. վորովհետեւ լուսավորութեան աշխատավորներն ամբողջապես ու լիովին միայն այդ բոպեյից սկսած կանգնեցին դասակարգային հեղափոխական կռուվի ընդհանուր ճանապարհի վրա: Այս մի չափադանց լուրջ քայլ էր: Դասակարգային հեղափոխական կռիվը ճանաչելը պարտադրում էր միութեանը այն բանին, վոր նա ամենից առաջ համերաշխվել է բանվոր դասակարգի կռվի հետ և, հետևապես, ինքն ել պետք է ակտիվ մասնակցի այս կռվին:

Մինչև 1917 թվականը գոյութեան ունեւ դաստիարակչունիների և դաստիարակների, այսինքն գուվերնյորների և գուվերնանտկանների համառուսական համախմբութեան: (Կային այդպիսի համառուսական միութեաններ ել): Յեթե մենք մի այսպիսի գուգահեռ անցկացնեյինք— մենք ունենք մանկատներ. յերեւայեցեք, վոր նրանց դաստիարակները համախմբվեյին և կազմեյին համառուսական միութեան, զրադարանապետները նույնպես ստեղծեյին իրենց համառուսական

միությունը, նախադպրոցականներն՝ իրենցը, գիտության աշխատավորներն՝ իրենց համառուսական միությունը և այլն: Մեր արտադրությունը մենք կը կտրատե՞յինք և կը բաժանե՞յինք անթիվ ու անհամար, տասնյակ համառուսական միությունների, թեկուզ այս համառուսական միությունները արժեքը լինե՞ր մի գրոշ:

Այն ինչ այսպիսի զատ-զատ միություններ ըստեղծելու հիշյալ ձգտումները, այս համըլարային թեքումները կային մեր մեջ: Նախքան այն, վոր մեր միությունը բարեկարգ և խոշոր կազմակերպության կը վերածվե՞ր և կանցներ, կազատվե՞ր բոլոր համըլարային թեքումներից, հարկ յեղավ խտորեն կուլել այս թեքումների դեմ: Դեռ նորերս, որինակ՝ մամուլի աշխատավորների վորոշ մասի մեջ նկատվում էր համըլարային թեքում: Միմիայն 12,000 կազմակերպված բանվոր ունենալով՝ նրանք ձգտում էյին, վոր մամուլի աշխատավորների իրենց սեփական համառուսական միությունն ստեղծեն: Դուք ինքներդ պատկերացնում եք, թե ուժերի և միջոցների ինչ հսկայական վատնում կը լինե՞ր, յեթե այս միությունն ունենար իր կենտկոմը և, որինակ 70—80 բաժանմունք և թե գործի համար եյապես ի՞նչ չնչին հետևանքներ կը տար այդ:

Ազգրներում այսպիսի թեքումների դեմ պետք չեղավ կուլել, և այս կուլվը չափադանց շատ յեռանդ լըլեց: Յեթե մենք այս բոլորիս ունինք դեռ ևս վոչ բավականաչափ միաձույլ ու բարեկարգ կազմակերպություն, այս միայն այն պատճառով է, վոր մենք շատ շատ ուժ ենք նվիրել հաղթահարելու այն ներքին պա-

ռակտումներն ու ընդհարումները, վորոնք գոյություն ունեյին մեր միջավայրում:

Համախմբվելով, մեր արտադրական միությունն ստեղծելով մենք մտանք արհմիությունների համառուսական համախմբության մեջ: Հենց սրանով մենք ընդունեցինք, վոր Արհմիությունների կենտրոնական խորհուրդն իրավունք ունի մեզ ղեկավարելու և մենք հանդիսանում ենք ամբողջ կազմակերպված արհարժման մի մասը:

Միության միջոցով մենք անմիջաբար կապ ունենք բանվոր դասակարգի հետ և հույնալիսի անմիջական կապ էլ կուսակցության հետ: Ընկեր Լենինն ուսացնում էր, թե միությունը մի տեսակ ողակ և կուսակցության և ժառանգների միջև, թե միությունը մասնաներին համախմբելով, նրանց տանում մոտեցնում է կուսակցությանը: Միության միջոցով բանվորն ու աշխատավորն սկսում են հասկանալ իրենց դասակարգային դրությունը, սկսում է նաև մտորել վոչ միայն իրենց փոքրիկ, նեղլիկ գոյության հարցի մասին, այլ և իրենց ամբողջ դասակարգի ու քաղաքական հարցերի մասին:

Նախքան բանվորին քաղաքականապես վերադաստիարակելը, նախքան նրան այն աստիճանին բարձրացնելը, վորի մասին ընկեր Լենինն ասել է—անկուսակցականությունից դեպի կոմունիզմ տանելը, նա, բանվորը՝ շատ մեծ ու յերկարատե գպրոց պետք է անցնի:

Դուք գիտեք, ընկերներ, վոր Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո յերկիրը չափադանց ծանր դրության մեջ ընկավ: Պետության բոլոր միջոցներն ու

ուժերը ծառայում էյին մեր յերկրի պաշտպանությանը: Այնուհետև նրանք ուղղվեցին արդյունաբերության և գյուղատնտեսության վերականգնման կողմը:

Յերրորդ ֆրոնտը հաջորդ ֆրոնտն էր, վորովհետև յերկիրն այլապես չէր կարող ազատագրվել աղքատության ու սովի ճանկերից մինչև վոր չվերականգնեք իր տնտեսությունը: Յև մեր միությունը շատ լավ հասկանում էր, վոր յեթե նա՝ հաշվի չառնելով ամբողջ բանվոր դասակարգի շահերը՝ հենց այս բոլորն էր իրեն հիմնական խնդիր դնի—ինչ գնով ուզում է լինի—հասնել իր տնտեսական վիճակի բարելավման ու աշխատավարձի բարձրացման, ապա այդ կընշանակեր, վոր միությունը կովում է հենց իր դասակարգի շահերի դեմ:

Ամբողջ բանվոր դասակարգի շահերը, հաղափուլության շահերը գոհողություններ էյին պահանջում լուսավորության աշխատավորներից:

Արդյունաբերությունը բարձրացնելու, փոխադրությունը բարձրացնելու համար պետք էր հանքագործին, մետաղագործին, յերկաթուղայինն հնարավորություն տալ, վոր փոքր ինչ ավելի աշխատավարձ ստանան, վորպեսզի՝ այս տնտեսությունը վերականգնելուց հետո կարելի լիներ առաջ շարժվել ու բարձրացնել նաև լուսավորության աշխատավորների նյութական դրությունը:

Մեզ հրում էյին դեպի սխալ ճանապարհ: Մեզ ասում էյին. «մեր ինչ գործն է, վոր նա՝ խորհրդային պետությունը միջոցներ չունի, մեր գործն այն է, վոր պաշտպանենք մեր շահերը, մեր արհեստի շահերը»: Մեզ հրում էյին չեզոքության ճանապարհը: Մեզ ասում

էյին. «միությունները պետք է չեզոք լինեն, միությունները քաղաքանությամբ չպետք է զբաղվեն. միությունները պետք է իրենց գործունեությունը սահմանափակեն տնտեսական հարցերով. նրանք պետք է բարելավեն իրենց անդամների դրությունը»:

Այս չեզոքությունն իսկապես քարոզում էյին բուրժուազիայի ներկայացուցիչները, սոցիալ-դեմոկրատիայի ներկայացուցիչները, բոլոր աշակերտյան սոցիալիստական կուսակցությունները, եսերների ներկայացուցիչները ևայլն: Բայց այս այսպես կոչվող «չեզոքությունն» իրոք քողարկված մի կոիվ էր բանվոր դասակարգի դիկտատուրայի դեմ, վորովհետև այս չեզոքության յետևը թագնված էր այն, վոր հենց այս չեզոքությունը գործադրեն ի վնաս բանվորական դասակարգի շահերի, ի վնաս խորհրդային իշխանության շահերի: Միությունն ամենից առաջ պետք է բացահայտ գիրք բռներ, վորպեսզի ապացուցեն, թե միության այս չեզոքությունը բանվոր դասակարգի համար չարիք է, կորուստ է:

Լուսավորության աշխատավորներն իրենց դասակարգային իդեոլոգիայի դաստիարակության տեսակետից՝ գտնվում էյին և գտնվում են մի փոքր ավելի վատթար պայմաններում: Մեր անդամների մեծ մասըն ապրում է գյուղում, գյուղացիական տարերքով շրջապատված: Նրանք ցրված փոշիացած են: Յեթե մենք այս բոլորը հաշվի առնենք, պետք է ասենք, վոր լուսավորականներն մասսայորեն այնուամենայնիվ անձնատուր չեղան, այնուամենայնիվ դեմ կանգնեցին չեզոքության այս հրապույրին: Իսկ հրապույրը շատ մեծ էր: Լուսավորականները կրում տանում էյին և՛ քաղց,

և՛ ցուրտ, կրում եյին այնպիսի ժամանակներ, յերբ աշխատավարձն ամսական 2 ռուբլու յեր հավասար, յերբ նրանց վճարում եյին ամեն տեսակ փոխանյութերով (суппортами), յերբ ուսուցիչները յերբեմն բակերակ եյին շրջում համարյա վողորմածութուն գտնելով՝ ճաշելու:

Ամենաժուլը, ամենածանր ժամանակ եր այն: Այս տեսակ պայմանների մեջ կարելի կըլիներ կորցնել հավատն այն մասին, թե այս կյանքը յերբեկեցի կը բարձրովի:

Ահա թե մեր միությունն ինչպիսի պայմաններումն եր հարկադրված աշխատելու: Ճշմարիտ ե՛կային առանձին թեքումներ, բայց միության հիմնական դժի վրա վոչ մի ազդեցություն չունեյին նրանք:

Ընկերներ, առաջին շողքը, վորը ծագեց մեր աշխատավորների համար, խորհուրդների X համագումարն եր: Խորհուրդների X համագումարն այն նշանաձոցն եր, վորը ժողովրդական լուսավորության աշխատավորների գրության մեջ գծվող նոր շրջադարձը վորոշեց, հարկ յեղավ, վոր մեր միությունը լարի իր բոլոր ուժերը, վորպեսզի չկորցնի իր անդամների մասսան: Մի կողմից այս: Մյուս կողմից ել մեզ հարկավոր եր ձգտել այն բանին, վոր պետությունը բազմապատկի յուր ուշադրությունը դեպի «յերրորդ» ֆրոնտը, իր ուշադրությունն ուղղի լուսավորության աշխատավորների նյութական գրության կողմը:

Յես պետք ե նշիմ, վոր այս յերկրորդ բնագավառում մեր պայքարը միշտ ընթացել է ժողովրդական լուսավորության կոմիսարիատի հետ ձեռք ձեռքի տըլված: X համագումարում ընկեր Լուսնաչարսկու գեկուց-

ման համար պատրաստվել եյին թե լուսավորության ժողովրդական կոմիսարիատը և թե միությունը:

Միության ձայնը, լուսավորության ժողովրդական կոմիսարիատի ձայնը X համագումարում լսելի յեղավ: Միության և լուսավորության ժողովրդական կոմիսարիատի այս աշխատանքն ահագին նշանակություն ունեցավ: Պետք եր ապացուցել, վոր հասել է այն ժամանակ, յերբ լուսավորության գործի վրա այլևս չի կարելի ուշադրություն չդարձնել: Պետք եր ստեղծել առաջխաղացման նախապայման և կասեցնել հետընթաց շարժումը. իսկ այս տեղի ունեւ՝ հեղափոխության սկզբի հետ համեմատելով, յերբ մեզ մոտ դպրոցների ցանցը չափազանց արագորեն զարգանում եր: Պետք եր ստեղծել նախապայման, վոր լուսավորության գործը՝ թեկուզ դանդաղ, սակայն առանց կանգ առնելու՝ առաջ շարժվի: Յե այս խնդիրը, վոր դրված եր միության առաջ, մինք ամբողջ ժամանակի ընթացքում աստիճանաբար իրագործել ենք և այժմ ել ի կատար ենք ածում:

Յես կըկամենայի ցուցադրել մի փոքրիկ համեմատական աղյուսակ: Նա ցույց ետալիս, թե ինչպես այս ժամանակի ընթացքում, յերբ մենք զգացինք, թե մեր վոտների տակ արդեն մի քիչ հող կա, յերբ վոր հասավ ժամանակը, յերբ լուսավորության հարցն ու լուսավորության աշխատավորների գրության խնդիրը կարելի յեր դնել ավելի վորոշ և ավելի կտրուկ, մենք լուսավորության աշխատավորների նյութական գրության այս հարցերն սկսեցինք աստիճանաբար ավելի ու ավելի մղել դեպի առաջին շարքը (плаг) և դարձրինք մեր մարտական խնդիրներից մեկը: Յես կըհամեմատեմ միայն

յերկու ծայրագույն թվեր՝ լուսավորության աշխատավորների միջին աշխատավարձը 1922 և 1924 թվերին: Վերջենք քաղաքի աշխատավորներին. 1922 թվին նրա վարձաչափը հավասարվում էր 11 ո. 48 կ. 1924 թ. այս վարձաչափը հավասարվում էր 25 ո. ուրեմն այս ժամանակի ընթացքում բարձրացումը լինում է յերկու անգամից ել ավելի: Գյուղական աշխատավորները 1922 թ. ստանում էին 6. 33 կ. 1924 թվին այս վարձաչափը 24 ո. 57 կ. էր. բարձրացումը 387 տոկ: Փոխադրության ասպարեզում այս բարձրացումը այն ժամանակաշրջանում յեղել է 218 տոկ:

Քաղաքի ու գյուղի աշխատավորները աշխատավարձի մեջ յեղած հարաբերությունն ազատակող էր: Քաղաքային ու գյուղական աշխատավորի աշխատավարձի մկրատի բացվածքը շատ մեծ էր: Միևնույն աշխատանքի համար 1-2-ին աստիճանի ուսուցիչը քաղաքում ստանում էր գրեթե յերկու անգամ ավելի, քան գյուղի աշխատավորը: Մկրատը սեղմելու այս խնդիրը միությունը դրել է իբրև մարտական ամենաանհրաժեշտ խնդիրներից մեկը: Ներկա բոլեյին այն բացվածքն այլևս գոյություն չունի, և մենք այժմ, ինչպես քաղաքում, այնպես ել գյուղում, միևնույն բնության (нагрузка) համար, միջին հաշվով ուսուցիչների միատեսակ աշխատավարձ ունենք: Ճշմարիտ է, տեղ-տեղ դեռևս կան առանձին բացառություններ, սակայն նրանք չեն փոխում ընդհանուր պատկերը:

Այս նվաճումներն, իհարկե, մենք միանգամից չենք ձեռք բերել: Մենք ահապին ընդդիմության ենք հանդիպել՝ քաղաքում աշխատող ընկերների կողմից: Մեզ ապացուցում էին, թե հավասարեցման մեր այս

քաղաքականությունը կրճանգի այն կետին, վոր մեր միության շարքերում կազմալուծում կըմտցենք, թե մենք սխալ քաղաքականություն ենք վարում, թե ինչպես վոր առաջ պակաս էին վճարում գյուղում, այսուհետե ել պետք է պակաս վճարել: Այն ինչ՝ գյուղում արդեն դասավորված և այս բոլեյին դասավորվող հանգամանքներն ասում էին և ասում են, վոր յեթե մենք այսուհետե ել պաշտպանենք աշխատավարձի այս տարբերությունը, գյուղի մեր աշխատավորին կըլենք անտանելի պայմանների մեջ: Գյուղի աշխատավորից պահանջում են, վոր նա վոչ միայն ուշադրություն դարձնե դպրոցին, այլև ոժտնդակություն ցույց տա գյուղական տնտեսությանն ու կուլտուրայի բարձրացմանը:

Վերջում այն եր ստացվում, վոր մեր լուսավորական աշխատավորներն ավելի ու ավելի էին ներքաշվում հասարակական գործի մեջ, և ուսուցիչն արդեն վորոշ արժեք ունի վոչ միայն միության տեսակետից, այլև բուն իսկ բանվոր դասակարգի միջավայրում փոխվում էր ուսուցչի նկատմամբ ունեցած հայացքը. նրա վրա սկսեցին նայել իբրև մի անձի վրա, վորը գյուղում պատասխանատու աշխատանք է վարում:

Պետք էր հասկանալ այս դերը, վոր բաժին էր ընկել գյուղական ուսուցչին, ինչպես վոր քաղաքացիական պատերազմի շրջանում կարմիր բանակի այն գործառնալը, վոր ուղղափառապետի ամենից ավելի վտանգավոր դիրքն էր բռնած լինում, գյուղացին ավելի ավել էր զինված ու հագնված լինում, այնպես ել ներկայումս մեր առաջ ծառացել է այն հարցը, վոր կա-

րելույն հափ նյութապես լավ աղահոլենք մեր գյուղական լուսավորական բանակը:

Ընկեր Ռիկովը յերեկ ձեզ ասում էր, վոր ժողովրդական լուսավորության համար ամբողջ Միության մեջ 1924 թ. բաց թողնված գումարն անվանապես մոտեցել է մինչպատերազմյան մակարդակին: Յեթե յեւակեա վերցնենք այն թվերը, վոր ընկեր Ռիկովը հայտարարեց առաջին նիստում, ապա մենք ունենք 265 միլիոն ռուբլի Խորհրդային Հանրապետությունների ամբողջ Միության ժողովրդական լուսավորության համար: Իսկ 1914 թ. լուսավորության ցարական մինիստրությունը միևնույն սահմաններում ժողովրդական լուսավորության գործի վրա ծախսել է 272 միլիոն: 272 միլիոնն ու 265 միլիոնը անվանապես համարյա նույնն են: Այս խոստում է հոգուտ այն բանի, վոր մենք այս ժամանակաշրջանում մոտեցել ենք մինչպատերազմյան նորմային և նշանավոր կերպով բարձրացել ենք 1922 թվի համեմատությամբ, յերբ մենք 265 միլիոնի փոխարեն ունեյինք միայն 112 միլիոն: Այդպիսով մենք տեսնում ենք, վոր առաջ ենք քայլել և այն ել՝ նշանավոր հափով:

Միությունն ինչպես և աղդել լուսավորության աշխատավորների աշխատավարձը բարձրացնելու հարցի վրա: Նա վոր առաջ խնդիր է դրել հասնել այն բանին, վոր լուսավորության աշխատավորների աշխատավարձը մուծվի պետական և տեղական բյուջեյի մեջ: Պետբյուջեյի նկատմամբ մեր քաղաքականությունն այն է յեղել, վոր լուսավորության աշխատավորների աշխատավարձի համար բաց թողնվող գումարներն աստիճանաբար բարձրանան: Այս բարձրա-

ցումը մեզ տվել է հետևյալ հետևանքները. 1922 թվին լուսավորության աշխատավորների աշխատավարձի համար բաց է թողնված 50 միլիոն ռուբլի, 1924—1925 թ.—167 միլիոն, այսինքն այս ժամանակամիջոցում պետության կողմից լուսավորության աշխատավորներին աշխատավարձի համար Պետբյուջեյից և տեղական բյուջեյից ծախսվող ընդհանուր գումարն աճել է ավելի քան յեռապատիկ:

Յերբ վոր տեղական բյուջեյի մեջ նկատվեց վորոշ հափով պակասորդ (дефицит), մեր միությունը հարց դրեց՝ լրացուցիչ դրամական հատկացում անել տեղական բյուջեյին ոժանդակելու՝ սրա այն մասում, վորը գործադրվում էր մեր աշխատավորների աշխատավարձի համար: 1923—24 թ. մենք այս գործի համար ստացել ենք 4 միլիոն 640 հազար ռուբլի, 1924—25 թ. տեղական բյուջեյներին ոժանդակելու համար մենք արդեն ստանում ենք 14 միլիոն ռուբլի: Այդպիսով՝ հաշվի առնելով այս շրջանում յերկրի տընտեսական դրության բարվոքվելը՝ միությունը ձգտում է այն բանին, վոր գլխավոր ուշադրությունն ուղղված լինի աշխատավարձի բարձրացման կողմը:

Այս նվաճումներն, իհարկե, վերջնական չեն, և չի կարելի ասել, վոր սրա վրա կարելի չէ կանգ առնել: Հետագայում ևս միության խնդիրը պիտի այն լինի, վոր բոլոր ջանքերը գործ դնի՝ լուսավորության աշխատավորների աշխատավարձը բարձրացնելու այնպիսի մակարդակի, վոր հնարավորություն տա նորմալ ապրելու: Այս, իհարկե, մի ռոմա խնդիր չէ. այս վոչ միայն մեր ցանկությունից է կախված, այլև այն

բանից, թե պետական միջոցները վոր չափով թույլ կըտան:

Այս միջոցում մենք առիթ ունեցանք բաղխվելու իրավական հարցերի: Աշխատավորները տեղերում շատ հաճախ անբարյացակամ վերաբերմունքի ելին հանդիպում տեղական իշխանութիւններին կողմից: Այլևայլ պարտիքներ, գործակոչներ (мобилизации) եայլն սովորական ելին դարձել և գործադրվում ելին իբրև կանոն: Հարկ յեղավ, վոր միութիւնն իր վրա վերցնէ մեր աշխատավորներին իրավական շահերի պաշտպանութիւնը: Մեզ հաջողվեց Լուսժողկոմի միջոցով ընդունել տալ մի շարք կարգադրութիւններ, վորպեսզի վերացնենք մեզ մոտ գոյութիւն ունեցող բոլոր այլանդակութիւնները:

Որինակ, մեր առաջ չափազանց սուբ կանգնել եր հետեյալ հարցը. 1923—24 թ. տեղերում նկատվել ելին այնպիսի դեպքեր, վոր ամբարային արձակուրդներն սկսվելուն պես Խորհրդային մարմինները՝ միջոցներ չլինելու պատճառով, հնարավոր ելին համարում արձակուրդներից հենց անմիջապէս առաջ՝ արձակել աշխատավորներին, վորպեսզի ամբարային դադարի համար չվճարեն: Մենք կարողացանք Լուսժողկոմի միջոցով շրջաբերական հրատարակել տալ, վոր այդպիսի դեպքերում արձակվողներին լրիվ վճարեն առաջիկա արձակուրդի ամբողջ ժամանակի աշխատավարձը: Այն ժամանակ ձեռնտու չի լինի արձագել աշխատավորներին, յեթե վոր մի քանի ամսի համար նախապէս պետք ե վճարվի:

Մենք ունեյինք մի հիվանդոտ (ցավոտ) յերկ-վույթ ևս. յերբ աշխատավորներին՝ առանց վորեկ հի-

մունքի՝ նետում ելին մի տեղից մյուսը՝ հաշվի չառնելով վոչ նրա տնտեսական և վոչ ընտանեկան դրութիւնը: Յերկու յերեք որում, բառի բուն իմաստով, քշում ելին վորեկ մի խուլ գավառ և սրանով խեղճ մարդու «ծնկները փշրում»: Մեզ հաջողվեց Լուսժողկոմատի հատուկ շրջաբերական հրատարակել, վոր այդպիսի այլանդակութիւն այլևս գոյութիւն չունենա:

Յեա չեմ թվել այն բոլոր միջոցները, վոր մեզ հաջողվեց կիրառել՝ տեղական իշխանութիւններին կողմից կատարվող վարչական այդպիսի ստեղծագործութիւն ղեմ: Անհրաժեշտ յեղավ, վոր միութիւնը կովի վոչ միայն տեղերում, այլև կենտրոնից արված վորոշ կարգադրութիւնների միջոցով: Այս միջոցը մենք գործադրեցինք բավական յեռանդուն կերպով և աստիճանաբար հասանք այն բանին, վոր այժմ իրավախախտումների միայն առանձին դեպքեր են լինում:

Իհարկե՝ հավանական ե, վոր առանձին դեպքերում այն դեռ կըշարունակվի: Այս իրավախախտումների դեմ մղվող պայքարը կարող ե և պետք ե կիրառվի միութենական կազմակերպութիւնների կողմից աննկուն յեռանդով հետագայում ել: Այս նպատակով միութենական կազմակերպութիւնները պետք ե բավական ուշադրութիւն նվիրեն իրավախախտումներին, լինեն սրանք թե մեր կոլլեկտիվներին և թե առանձին անհատների վերաբերմամբ:

Ընկերներ, ուշադրութիւն դեպի առանձին անդամ և դեպի մանր բաները (мелочь), այս լուրջ բան ե: Մեր միութիւնները միշտ ուշադրութիւն չեն դարձնում այդ մանր բաներին վրա: Մենք հաճախ նկատում ենք դեպքեր, յերբ միութիւնն այս առանձին

այսպես կոչվող՝ մանր բաների վրա քիչ և ուշադրութ-
յուն դարձնում: Միությունը հարկավոր չի համա-
րում պաշտպան կանգնել իր անդամին, յերբ նա վի-
րավորանք և ստացած լինում:

Միութենական կազմակերպություններն՝ իբրև կու-
նոն՝ պետք և ըմբռնեն, վոր միությունն ուշադիր կեր-
պով պետք և հետևի միութենական կյանքի բոլոր յե-
րևույթներին: Նա չպետք և արհամարհի այս մանր
բաները: Նա պետք և նրբազգաց լինի դեպի անդամ-
ների կարիքները՝ ոգնելով նրանց այս մանրունքների
մեջ. սրանից և կազմվում միության ամենորյա աշ-
խատանքը:

Միությունը միայն ուշադիր և խորանկատ լինե-
լով կարող և գրավել մասսաների համակրությունը և
ժողովրդականություն վայելել իր անդամների շրջա-
նում:

Ընկերներ, վերջին շրջանում մեր ուշադրության
կենտրոնում կանգնած և յեղել գյուղը: Գյուղական աշ-
խատանքը—մեր միութենական շղթայի թույլ ողակն
է: Այս ողակի վրա մենք ուշադրություն հնք դարձրել
դեռևս նախանցյալ տարի: 1924 թ. սկզբում մենք հե-
տաքննություն կատարեցինք 34 գավառակում (ВО-
ЛОСТЬ) և 12 նահանգներում, վորպեսզի վեր հանենք
ցավոտ կողմերը, թերությունները, բացասական յերե-
վույթները և՛ համենայն դեպս, վորպեսզի լուսանկա-
րենք մեր միութենական ստորին խավերի կյանքի
պատկերը: Մենք շատ վատ ինֆորմացիա ունենք, մեր
կապը շատ վատ և յեղել: Մենք կարողացանք ձեռք բե-
րել մեր ստորին բջիջի աշխատանքի ճշգրիտ նկարա-
գրությունը: Մենք մեզ նպատակ դրինք լույս սփռել

մեր ստորին բջիջների վրա, վորպեսզի վերացնենք նը-
րանց աշխատանքի մեջ յեղած ցավոտ տեղերը: Այս
հետաքննությունը, ընկերներ, մեզ տվեց հետևյալ հե-
տևանքները:

Ամենից առաջ պետք և ասել, վոր մասսայի մեջ
կատարվող միութենական աշխատանքը, այնպիսի մի-
ութենական աշխատանքը, վորն իսկապես պետք և
տարվի, դժբախտաբար ահագին թերություններ ունի:
Արտաքուստ միութենական աշխատանք կա. յերբեմն
կա և ընկեր, վորն ստորագրում և թղթիկներ, վորն
ընդունում և թղթիկներ, վորը կարգադրություններ և
անում, վորը վարում և (администрирует): Այս բոլորն
արտաքուստ կա: Կա տեղկոմի քարտուղար: Սակայն
յեթե դուք ավելի խորը թափանցեք, կըտեսներ, վոր
այս արտաքինի տակ յերբեմն դատարկություն և ծածկ-
ված: Միության անդամները կապված չեն միութե-
նական բջիջ հետ, միութենական խնդիրները չափա-
զանց վատ են յուրացված:

Որինակ՝ աշխատանքի որենքների կողքիցսին ծա-
նոթ են 11 կազմակերպության անդամներ, անծանոթ
են 18 կազմակերպության անդամներ: Միության կա-
նոնադրության ծանոթ են 15 կազմակերպության մեջ,
անծանոթ են 14 կազմակերպության մեջ: Սոցիալա-
կան ապահովության վերաբերյալ որենքներին ծանոթ
են 15 կազմակերպության մեջ, անծանոթ են 14 կազ-
մակերպության մեջ:

Տեղ-տեղ մեր միության անդամները շփոթում են
լուսբաժինը միության գավառական բաժնի հետ: Յերբ
հարց ելին տալիս՝ «Ձեզ մոտ ո՞վ և զեկավարում ար-
հեստակցական աշխատանքը», պատասխանում ելին

Ժող. Լուս. Գալ. Բաթ. (Մ. Օ. Ի. Օ.): Այսպիսի պատասխանները հազվագյուտ չեն լինում:

Արհեստակցական այսպիսի ցածր գիտակցության մեջ ուժին դժվար է գյուղում արհեստակցական աշխատանք տանել: Ահա թե ինչու ստորին բջիջն այս րոպեյիս մեր արհմիութենական աշխատանքի ուղղորդության կենտրոնն է կազմում: Յեթե մենք հենց այժմ ուժ չտանք տեղիումին, չստեղծենք ստորին փորձառու արհաշխատավորների հիմնագունդ (кадр), մեր անդամներին պարզ չծանոթացնենք միության նպատակներին ու խնդիրներին հետ, այնտեղ (գյուղում) միութենական աշխատանք չկազմակերպենք այն ժամանակ, իհարկե, միանգամայն անհնար է պահանջել, վոր մեր միությունը, այսինքն մեր միության անդամների կեսը գիտակցորեն վերաբերվի դեպի իր պարտականությունները:

Դուք այստեղ արդեն լսեցիք, վոր մեր միությունը հասարակական մեծ աշխատանք է կատարում: Այս րոպեյիս բողոքներ են հնչում, վոր անդամները ծանրաբեռնված են հանրային աշխատանքով: Յես կարծում եմ, վոր ծանրաբեռնություն զործն այնքան կախված չէ այն հանգամանքից, վոր մեզ մոտ անչափ շատ պարտականություններ կան, վորքան այն բանից, վոր մենք բավարար կազմակերպվածություն չունենք. մենք չենք սովորել հմտորեն կանոնավորել այս հասարակական աշխատանքը: Մենք տեղեկություններ ունենք, վոր 30 նահաթիներում հասարակական աշխատանքով պարապում են, մոտավորապես անդամների կիսից մի քիչ ավելին:

Յես անձամբ կարծում եմ, վոր նույն իսկ այս

թվերը չափազանցված են մի քիչ: Յենթադրենք նույն իսկ թե մեզ մոտ անդամների կեսն զբաղված է հասարակական աշխատանքով: Հարց է առջ գալիս՝ իսկ ի՞նչ է անում մնացած կեսը: Մնացած կեսը վոչինչ չէ անում. նա հասարակական աշխատանքը բեռնում է իր ընկերների թիկունքին և հարկադրում նրանց կռահալ ճկուն չափ: Այստեղից ի՞նչ խնդիր է բղխում: Ահհրաժեշտ է, վոր տեղիումները իրենց բոլոր անդամներին միութենական գործնական ակտիվ աշխատանքի քաշեն, անհրաժեշտ է, վոր նրանք հանրաբար ուսուցիչ (учитель общественник) ստեղծեն: Մեզանում արտադարձական շատ, շատ պաշտականություններ կան, վորոնք զբաղվում են մեր անդամների վրա:

Ինձ մի ցուցակ են տվել, վորի մեջ հաշվված են 17 պարտականություն գյուղում: Յես թուուցիկ կերպով անչքի անցրի այն և կարծում եմ, վոր այստեղ նշված են այն պարտականությունների միայն մի մասը: Այդպիսի պարտականություններ կարելի է տասնյակներով հաշվել, սակայն այստեղ պետք է վորոշել գլխավորը—հասարակական վճիռ աշխատանքն անպայման պետք է ուսուցչի ձեռքով կատարվի և այն ի՞նչ պես պետք է կատարվի:

Որինակ՝ հասարակական աշխատանքի մի ձևը համարվում է հետևյալը. նստել կոոպերատիվում իբրև հաշվետար, գյուղխորհրդում՝ իբրև գործավար կամ գրադիր: Դյուղական ժողովներից մեկում գյուղացիները շատ իրավացի նշել են, վոր նրանց մոտ ուսուցիչը կոոպերատիվում հաշվետար է դարձել, այն ինչ՝ կոոպերատիվի վարչություն մեջ հասարակական աշխատանք կատարող չկա: Դյուղացիներն իրենք հարց են

դնում, վոր ուսուցիչը Հայետք և ոգտագործվի տեխնի-
կական աշխատանքի համար, վոր նրա գործն այն է,
վոր լինի կազմակերպիչ, հասարակական կուլտուրա-
կան աշխատավոր և վոչ թե տեխնիկական կատարա-
ծու դառնալ:

Յեթե մեր խելքին փչեր՝ այժմ այերոպլանով ա-
վազ, կավ ու աղյուս փոխադրել, ապա այս ուղղակի
վատնում կըլիներ: Ուսուցիչն այդպես թանգարժեք գոր-
ծիք է, վոր չի կարելի նրան ոգտագործել այսպիսի
տեխնիկական աշխատանքի համար:

Մենք հանրադար ուսուցիչներ (учитель-общест-
венник) քիչ ունենք. ահա թե ինչո՞ւ տեղկումի խնդի-
րը այն է, վոր տասնյակ պարտականություններից
ընտրի ամենագլխավորը, որինակ՝ անգրագրություն
վերացումը, աշխատանքը խրճիթ-ընթերցարանում և
այլն:

Պետք է զատել քիչը, սակայն հիմնականը: Ան-
հրաժեշտ է, վոր տեղկումն այս աշխատանքը բաժանի
բոլոր անդամների միջև նրանց ույժերի համեմատ:

Յերբ ընկեր Զինովկն ասում է, թե ուսուցիչը
գյուղում պետք է լինի ագիտպրոպ ու կազմբաժին,
ինարկե այս աշխատանքը տեղկումը պետք է կատարե
և վոչ թե առանձին ուսուցիչը: Տեղկումը պետք է հաշ-
վի առնե բոլոր անդամներին և նրանց ընդունակու-
թյունների համեմատ՝ նրանց միջև հավասարաչափ բա-
ժանի հասարակական աշխատանքը: Միայն այս պայ-
մանով կըլերանա ուսուցչի ծանրաբեռնություն խնդիրը
և այն հարցը, վոր այս ծանրաբեռնություն միջոցին
անկարելի չե արտագրողական աշխատանք կատարել:

Տեղկումի նշանակությունն այստեղ շատ բարձ-

րանում է: Յեվ սրա համար էլ, ընկերներ, մենք պետք
է մեր առաջ մերձավոր խնդիր դնենք՝ ամրապնդել
տեղկումը և ստորին արհաշխատավորների հիմնագունդ
(кадр) նախապատրաստել: Այնուհետև մեր անդամնե-
րի մասնաշին մենք պետք է ծանոթացնենք արհես-
տակցական աշխատանքի բովանդակության հետ և
յերբորդ՝ արհեստակցական ստորին բջիջի-տեղկումի մի-
ջոցով կանոնավորենք հասարակական աշխատանքը:
Այս խնդիրն իրագործելի չէ:

Ապա մի հիվանդագին հարց էս: Մեր միության
մեջ կիսից ավելին կանայք են, բայց հասարակական
և միութենական աշխատանքի մեջ կանայք շատ ան-
նշան մասնակցություն են ունենում:

Վերցրեք կանանց մասնակցությունը տեղկում-
ներում: Ահա գավառակային աշխատավորների կազմը՝
— տղամարդիկ՝ 70 տոկոս, իսկ կանայք՝ միայն 30
տոկոս: Դուք տեսնում եք, վոր տղամարդկանց գերա-
կշությունն այստեղ ակներև է, թեև մեր միության
մեջ անդամների մեծամասնությունը կանայք են: Այս
նշանակում է, վոր կանանց նշանավոր մասը միութե-
նական աշխատանքի չի քաշված: Այս պատճառով, ըն-
կերներ, մենք պետք է առանձնապես զորեղ ուշադրու-
թյուն դարձնենք կանանց շրջանում կատարելիք աշ-
խատանքի վրա: Մի քանի ընկերներ ասում են, վոր
անպատվություն է մեր լուսավորականներիս միութ-
յան մեջ՝ խոսել կանանց շրջանում կատարելիք աշ-
խատանքի մասին: Իրր թե այստեղ էլ լինչ խոսելու
բան կա, յերբ բոլոր վարժուհիները գրագետ են, կըր-
թըված են, լուսավորական են, ուրեմն և հարկավոր
չե ագիտացիա մղել կանանց շրջանում: Այստեղ այս

ընկերներն ահա թե ինչ կետում են սխալվում: Նրանք հաշվի չեն առնում, վոր կինը յուրատեսակ մի տեղ ե գրավում հասարակութան մեջ:

Ընտանիքի և խոհանոցի հետ կապված կինը ավելի անբարենաջող պայմաններումն ե դաստիարակվել, քան տղամարդը: Նա հասարակական աշխատանքով ավելի սակավ ե զբաղված յեղել: Ուստի և պետք ե ոգնել նրան, վոր կարողանա մասնակցութուն ունենալ այս հասարակական աշխատանքի մեջ: Ահա թե ինչու, ընկերներ, յեթե մենք այս աշխատանքի վրա ուշադրութուն չգարձենք, մեր միության անդամների անպայման կեսը կամ այս կեսի մի նշանավոր մասը բոլորովին չի սպասարկուի:

Այժմ, ընկերներ, ելի մի հիվանդագին հարց: Ընկեր Զինովից յերեկ մատնացույց արեց այս խնդրը: Այս՝ դեպի կրոնասեր ուսուցիչն ունենալիք վերաբերմունքի հարցն ե: Կրոնասեր ուսուցիչն յերեւմտ արտաքսում են միությունից՝ կրոնական ծեսեր կատարելու համար: Կենտկումը հարկադրված ե լինում յեռանդուն կերպով կովել այս «արտաքսողական» քաղաքականության դեմ, վորովհետեւ յեթե մենք իրոք կանգնենք հավատացյալ ուսուցիչներին միությունից արտաքսելու տեսակետի վրա, ապա պարզ ե, վոր միությունը պետք ե հրաժարվի վերադաստիարակման իր հիմնական խնդիրներից մեկից՝ կոմունիզմի դրպրոց լինելուց: Յեւ կանգ չեմ առնի շատ որինակների վրա, այլ կըմատնանշեմ մեկը միայն:

Մոտերս Ստավրոպոլում տեղի ունեցավ շրջանային ուսուցչական I համագումարը, վորը՝ Բրյանսկի լըրտգրի ասելով՝ վորոշել ե փոխել միութենական կա-

նոնադրությունը՝ մտցնելով նրա մեջ մի կետ՝ ըստ վորի թույլատրելի չե, վոր կրոնական նախադաշարումներով վարակված ուսուցիչները ուսուցչական միության անդամ ընդունվեն: Մի քանի կազմակերպությունների մեջ հարց են հարուցում այն մասին, վոր դուրս ձգվի մեր կանոնադրության 9-րդ կետը, վոր ասում ե, թե միության անդամ կարող են լինել լուսավորության աշխատավորներն սուանց քաղաքական և կրոնական համոզումների խտրության: Հետեւապես՝ միության մեջ յուրաքանչյուր մասնակցի պետք կըլինել հարցնել, թե նա ինչ բանի ե հավատում և առաստաղակ հովատում ե արդյոք:

Այսպիսի մոտեցումը միանգամայն սխալ ե միութենական տեսակետից, վորովհետեւ յեթե մենք առաջադրելինք այսպիսի պահանջ, ապա, իհարկե, չեյինք կարող խնդիր դնել՝ վերադաստիարակելու այնպիսի ընկերներին, վորոնք հավատում են քրիստոսին, մահմետին կամ ուրիշ վոր և ե առասպելական մարգարեյի:

Ճնշման վարչական միջոցներով, արտաքսման միջոցով այս մոլեռանդության, այս կրոնական ցնորամտության դեմ մենք չենք կարող կովել և չպետք ե կովենք: Այս միանգամայն անպետք մեթոդ ե:

Մեր Կենտկումի որդան «Учительская газета»-ն մոտ որերումս այս հարցի առիվ լայն բանավեճ բացեց: Այս բանավեճից պարզվեց, վոր տեղերում այս հարցի առթիվ կատարյալ խառնաշփոթութուն ե տիրում: Մի մասն արտաքսելու կողմն ե, մյուս մասը՝ պահելու: Յեւ կարծում եմ, վոր մենք պետք ե հաստատապես ասենք.—Միությունը համախմբում ե այն

աշխատավորներին, վորոնք վարձման կարգով տալիս են իրենց բանվորական ուժը, չեն շահագործում ուրիշի աշխատանքը, միությունը համախմբում է այս աշխատավորներին՝ առանց քաղաքական և կրոնական համոզմունքների խտրության: Սակայն միությունը պետք է վերադաստիարակի կրոնական նախապաշարունակներով վարակված ընկերներին՝ նրանց ծանոթացնելով մատերիալիստական աշխարհայացքի և բռնական գիտությունների հետ: Այս ամենալավ միջոցն է կրոնական նախապաշարունակների դեմ կռվելու համար: Այս պրոպագանդան լայն չափերով պետք է կազմակերպել մեր խմբակներում, դասընթացներում ու սխոսեմատիկորեն առաջ տանել:

Ընկերներ, մեզ մոտ հավաքվել են՝ այսպես ասած՝ միջազգային համագումար, վորին ներկա յեն տասնյակ ազգություններ: Մենք վաղուց արդեն ուշադրություն ենք դարձրել այն բանի վրա, վոր մեր միությունը յուրաքանչյուր ազգության կարիքները հոգա նրա մայրենի լեզվով:

Ուկրաինայում մենք այժմ ունենք մեր միության հենտրոնական վարչություն, վորը յուր գործավարություններն Ուկրաինական լեզվով է կատարում: Տեղերում, նահրաժիններում ու տեղիկներում ամբողջ գործը տարվում է նույնպես ուկրաինական լեզվով, վոչ միայն գործավարությունը, այլ և ընդհանուր ժողովները, գրագրությունն ու գրականությունը, վորոնք այժմ ծնունդ են առնում այնտեղ, նույնպես տարվում են մայրենի լեզվով:

Միությունը միացյալ հանրապետությունների մեջ նույնպես վաղուց աշխատանքը տանում է այս

ուղղությամբ, վորպեսզի միությունը մոտեցնի իր անդամներին: Այժմ մեր խնդիրն այն է, վոր զանազան ազգությունների ընկերներից արհեստակցային (профессионалист) աշխատավորներ գաստիարակենք: Այս դժվար խնդիր է: Այժմ մենք աշխատավորների բավարար հիմնագունդ (кадр) չունենք մինչև անգամ ռուս ընկերների մեջ:

Մեր ընկերներն, որինակ՝ կիրգիզները, բաշկիրները և այլն, վորոնք անցյալում վատթար պայմանների մեջ են յեղել, ի հարկե, ավելի քիչ են պատրաստված, քան ռուս ընկերները. մեր անելիքը պետք է լինի ոգնել նրանց, վոր իրենց միջավայրից աշխատավոր ընկերներ դաստիարակեն, վորպեսզի նրանք իրենք կարողանան ղեկավարել արհշարժումը, վորպեսզի միությունը նրանց միջոցով մոտիկ և հասկանալի լինի մասսաներին:

Մեր համագումարներում, կոնֆերանսներում մենք ձգտում ենք մեր միության որդանների մեջ անցկացնել տվյալ ազգության ընկերներին: Այս քաղաքականությունը, վորն այժմ վարում է մեր հենտկոմը, նշանավոր չափով առաջ է գնացել:

Մի ամբողջ շարք հանրապետությունների մեջ, ինչպես, որինակ՝ ուկրաինայում, ստորին որդանների աշխատավորների յերեք քառորդն ուկրաինացիներ են: Միևնույնը կարելի չե ասել նաև մի ամբողջ շարք ուրիշ ազգությունների վերաբերմամբ ել: Միությունը պետք է ուշադրություն դարձնի ազգությունների մեջ կատարելիք աշխատանքի վրա, նրանցից արհեստակցական աշխատավորներ պատրաստելու վրա՝ այս նըպատակին հասնելու համար ավելի շատ միջոցներ է

ազնի շատ ուժեր հատկացնելով: Մենք աշխատում ենք ըստ կարելույն ազատել կամ իջեցնել առանձին ազգություններից յետ պահած գումարների տոկոսները, վորպեսզի այս միջոցները գործադրենք կուտ-աշխատանքի վրա: Մյուս կողմից մենք աշխատում ենք նրանց ապահովել կարելույն չափ ազնի շատ գրականություն, վորպեսզի նրանց ոգենենք՝ դաստիարակելու իրենց աշխատավորների հիմնագունդը (кадр):

Անցյալից գրականություն մատակարարելու հարցին:

Անցյալ 1924 թվի ընթացքում մենք անվճար ցրել ենք 1,358 գրադարանիկ, 29,441 գիրք: Մոտ ժամանակներս յենթադրում ենք ցրել 2,300 գրադարանիկ, 15,500 գիրք: Արհգրադարանիկները մենք անվճար ենք տալիս, վոր տեղիկներին գրականություն մատակարարենք, վորպեսզի նրանց հնարավորություն տանք աշխատանքը կատարելու:

Մեզ մոտ մեր կուլտուրական աշխատանքը կատարվում է լուսավորության աշխատավորների տնկերում:

Լուսավորության աշխատավորների տների աճումը 1922—24 թվերին այս պատկերն ունի.— 1922 թ. նահանգական և գավառական քաղաքներում՝ 31 տուն, իսկ այժմ ունենք 241 տուն: Լուսավորության աշխատանքների տները նաև սկումբներ են հանդիսանում:

Յերբ վոր լուսավորության աշխատավորների տները կազմվեցին, նրանք իրենց հիմնական նպատակ դրին բարձրացնել ուսուցիչ լուսավորականի մանկավարժական վորակավորումը (квалификация): 1924 թվին լուսավորության տների աշխատանքի բը-

նույթի և բովանդակության վերաբերող այս հարցը մենք վերստուգման յենթարկեցին: Մենք կարծում ենք, ընկերներ, վոր լուսավորության տները պետք է ակումբներ լինեն, վորտեղ լուսավորության աշխատավորները՝ բացի ուսուցիչից (учоба) կարողանային բանային (разумный) հանգիստ գտնել, վորտեղ աշխատավորները կարողանային հանգստանալ և իրենց ընկերների հետ մտերմական զրույցներ ունենալ:

Հո չի՞ կարելի հենց շարունակ վերադաստիարակել ու վերապատրաստել: Պետք է գտնե մի փոքր հնարավորություն տալ, վոր ակումբում յուրաքանչյուր մեկն ընտրի իր համար այն, ինչով հետաքրքրվում է, պետք է հնարավորություն տալ մարդուն, վոր մի քանի ժամ բոլորովին ազատ անցկացնի:

Ահա, ընկերներ, լուսաշխի տներում կատարվող այս աշխատանքն սկսում է աստիճանաբար պատվաստվել: Մենք ունենք մի ամբողջ շարք այնպիսի տներ, վորոնք անցել են ակումբային աշխատանքի սխառեմին: Յես այս բոպեյիս սրա վրա կանգ չեմ առնի, միայն կասեմ, վոր ակումբային աշխատանքի բնույթն արհմիությունների համար կուտ-աշխատանքի այն ձևն է հանդիսանում, վոր գործադրվում է բանվորական բոլոր կազմակերպությունների մեջ:

Ընկերներ, յերբ վոր մենք խնդիր դրինք ուշադրության կենտրոն դարձնել գյուղի աշխատավորներին, դրանից հետո սկսեցինք նկատել, վոր քաղաքի աշխատավորների շրջանում դժգոհությունն աճում է:

Քաղաքի աշխատավորները մեզ կշտամբում էյին, վոր կենտրոնական կոմիտեն գյուղական

աշխատավորներին ավելի ուշադրութիւն ե նվիրում, իսկ քաղաքի աշխատավորներին՝ քիչ ե ուշ դարձնում։ Հենց այս վիրավորանքը՝ ընկեր Զինուկին արտահայտութեամբ ասած, այս «խանդը» գյուղական աշխատավորների դերը պարզապէս չհասկանալու հետեանք ե։

Գյուղական աշխատավորն այս բռնաբան լուսավորութեան ամենագլխավոր ճակատում ե գտնվում։ Յեթե մենք քաղաքի ու գյուղի մեջ հավասարութեան նշան դնեցինք, ապա այս անարդարացի կըլինէր։

Յեա չեմ ուզում տպացուցել, վոր քաղաքային աշխատավորներն ավելի լավ պայմանների մեջ են գտնվում, վոր նրանց տրամադրված են քաղաքային կյանքի կուլտուրական լավագույն հարմարութիւնները։ Յերբ այդպիսի ընկերներին, վորոնք մեզմեղադրում են, վոր մենք ավելի ուշադրութիւն ենք ընծայում ե իբր թե աշխատավարձն անհամեմատ ենք բարձրացնում հոգուտ գյուղական աշխատավորների, մենք այդպիսի ընկերներին առաջարկում ենք. «Յեթե դուք իրոք այնպես եք համարում, վոր քաղաքային աշխատավորները զրկված ե, վոր նա ավելի վատ ե ապահովված, այդ դեպքում դուք կարող եք փոխանակել ձեր տեղերը գյուղական աշխատավորների հետ (ծափեր)։ Սակայն յես առիթ չունեցա՝ դրանցից գյուղ գնալ ցանկացող տեսնելու։ Յերբ վոր այս հարցը դնում ես կոնկրետ հողի վրա, ընկերն իսկույն սկսում ե ոձիքն ազատել ընդհանուր հարցերով ե ապա ծխի պես ցնդում ե՝ ո՞վ գիտե՝ ո՞ւր։

Ի հարկե մենք պետք ե ուշադրութիւն դարձնենք նաե քաղաքային աշխատավորներին ե դարձնում ել ենք։

Քաղաքային աշխատավորների դերն ել մեծ ե, քայց մենք պետք ե ընդգծենք, վոր քաղաքային աշխատավորները հասարակական կյանքում համեմատաբար ավելի սակավ մասնակցութիւն ե ունենում, քան գյուղականը։

Այս, ընկերներ, հաստատուն փաստ ե։ Ոսկայն այս չի նշանակում, վոր քաղաքային աշխատավորը՝ հասարակական գործերում ավելի քիչ մասնակցութիւն ունենալով՝ ջնջվում ե մեջտեղից ե վոր նրան հնարավորութիւն չի տրվում աշխատելու։

Քաղաքներում, որինակ՝ Մոսկվայում, հարյուրավոր ահումբներ կան։ Այս կուբներում շատ ու շատ բանվորներ կան։ Դուք տեսաք, ընկերներ, նրանք այստեղ գալիս եյին մեզ մոտ վողջուներու համագումարը։ Դուք տեսնում եք, թե բանվորներն ի՞նչպես ըզգաստ ականջ են դնում մեր համագումարին։ Բանվորն իմանում ե, վոր նա իր վորդու գաստիարակութիւնը պիտի վստահի դպրոցին։

Առավոտից մինչե յերեկո աշխատանքով զբաղված՝ նա չի կարող տեսնել, թե դպրոցում իր վորդին ի՞նչպես ե գաստիարակվում։ Հոկտեմբերյան հեղափոխութիւնն ապրած բանվորը ցանկանում ե իր վորդուն տեսնել իբրեւ շարունակող իր այն գործի, վորի համար նա պայքարել ե քաղաքացիական կովի, սովի ե բռնադատի ծանր տարիներում։ Բանվորը հոգով կըցավի իր վորդու համար, յեթե հավատացած չլինի, վոր ուսուցիչը դպրոցում իր վորդուն կըսուցնէ այն, վորի համար պայքարել ե ինքը՝ հայրը։

Ահա թե ինչո՞ւ բանվորն այնպես զգաստ լսում ե, թե ի՞նչ ե կատարվում դպրոցում։ Բանվորն ամի-

նախորին հարգանքով կըվերաբերվի դեպի այն ուսուցիչը, վոր նրա վորդուն կըսովորեցնի, թե պետք է պաշտպանել Խորհրդային իշխանությունն ու Հոկտեմբերյան հեղափոխությունը: Նմանապես՝ յեթե, րուսացիին ակմբում այդ բանվորին ոգնի՝ ավելի կուլտուրական դառնալու, բանվորն այդ ուսուցչին իրեն ընկեր կըհամարե:

Ուսուցիչը շփվում է կարմիր բանակի հետ, վորի «շեֆն» ենք մենք: Քաղաքի բանվորներն ու կարմիր բանակայինները— քաղաքային ուսուցչի աշխատանքի համար մի ընդարձակ դաշտ են:

Մենք քաղաքային ուսուցչին ևս պետք է ասենք, վոր այն ծանրությունը, վորը բաժին է ընկնում գյուղական ուսուցչին, այն է՝ գյուղացուն քաղաքակրթելը, այս իր կողմից նրան՝ քաղաքային ուսուցչին և կարտավորեցնում է բարձրացնել կարմիր բանակայինի և բանվորի կուլտուրան: Այս է ուսուցչի պատմական խնդիրը: Այս համագումարում մենք խոսում ենք վոչ թե քաղաքային ուսուցչին կշտամբելու համար, վորովհետև բանն այստեղ կշտամբելը չէ, այլ այն, վոր մատնանշենք քաղաքային ուսուցչի առաջ կանգնած խնդիրները: Միայն գյուղացու կուլտուրան բարձրացնելով, բանվորի կուլտուրան բարձրացնելով մենք նախապայման կըստեղծենք յերկրի ավելի զորեղ տընտեսական փթթման համար: Իսկ այս նշանակում է, վոր՝ ինչպես քաղաքային, նույնպես և գյուղական ուսուցչի տնտեսական զրությունը ևս ավելի շուտ կըբարվորվի:

Իմ զեկուցումը վերջացնելուց առաջ, ընկերներ, յես դեռ ևս կանգ կառնեմ՝ այն դերի վրա, վոր լու-

սավորության աշխատավորների ինտերնացիոնալն ըստեղծելու գործում կատարել է մեր միությունը:

Ընկերներ, մեծ է այն դերը, վոր կատարել է լուսավորության աշխատավորների միությունը միջազգային համախմբության մեջ: Դուք արդեն գիտեք, վոր մեր ինտերնացիոնալը, վորն այս րոպեյիս գոյություն ունի, և վորի ներկայացուցիչ՝ ընկեր Գեյզենբերգն այսօր ձեզ վողջունեց, այս ինտերնացիոնալը կանգնած է դասակարգային կռիվ տեսակետի վրա:

Ընկերներ, Խորհրդային Ռուսաստանում գոյություն ունեցող բոլոր արտադրողական միությունների միջից միայն մեր միությանը հաջողվեց ստեղծել իր ինտերնացիոնալը: Մյուս արհմիությունների համախմբվելու փորձը, ինտերնացիոնալ ստեղծելու փորձը չհաջողվեց, վորովհետև արհմիությունների մեջ սոցիալ-դեմոկրատները դեռ ևս իշխում են հրամանատարական բարձունքներին՝ իրենց փորձված բյուրոկրատիան ունենալով նրանց մեջ:

Բացի մեր հեղափոխական ինտերնացիոնալից՝ Մուսսոլինու յերկրում (Իտալիայում) ևս գոյություն ունի «Բոլոր սրբերի միջազգային ուսուցչական ընկերություն» անունով ինտերնացիոնալ: Այս հետադիմական ընկերությունն իրեն խնդիր է դնում՝ կույր հպատակություն «սուրբ» պապին, այլ և այն վոր կաթոլիկ յեկեղեցու ծոցի միջոցով ուսուցիչներին զբախտում տաքուկ տեղ հատկացնվի:

Հազիվ թե մեզ մոտ գտնվեն ընկերներ, վորոնք հավատան, թե այդպիսի «բոլոր սրբերի ընկերության» ոգնությամբ կարելի է իրենց զրությունը բարվոքել: Ամերիկայումս ել իր խղճուկ գոյությունն է քարշ

տալիս «Ուսուցչական համաշխարհային միությունը», վոր կազմակերպվել է 1923 թվին:

Բնորոշ է այն, վոր յերբ ժողովվեց այդ «Համաշխարհային ուսուցչական միության» համաժողովը, մի անհայտ անձ ուղարկեց մի միլիոն դոլլար՝ նրա կազմակերպության համար: Իսկ յերբ 1924 թվին Փարիզում ժողովվեց մեր Խնտերնացիոնալը, վոչ թե մի միլիոն դոլլար, այլ նույն իսկ մի քոռ գրոշ էլ վոչ վոք՝ չուղարկեց նրան «անհայտ» անձերի կողմից: Մեր Խնտերնացիոնալի մեջ մենք մոռնում ենք մեր դրամները բացահայտ և ուղղակի: Մեր միջոցները հայթայթվում են ազնիվ ճանապարհով: Միմիայն Գոմպեպի քաջարի լակեյները կարող են կապիտալիստական սրիկաների հետ միասին՝ ֆինանսական տուգերի միջոցներով նման ուսուցչական «խնտերնացիոնալներ» ստեղծել:

Լուսավորության աշխատավորների Խնտերնացիոնալի մեջ մտնելով՝ մենք մեզ նպատակ ենք դնում անխնա կռիվ մղել կապիտալիստների միջոցներով կազմակերպված այդպիսի «բոլոր սրբերի ընկերությունների» դեմ:

Մեր համախմբությունը հաշվում է 600 հազարից ավելի անդամ: Մեր Խնտերնացիոնալը դեռ չի ընդգրկում բոլոր յերկրները, բայց մենք արդեն միջազգային կազմակերպություն ենք: մենք վորոշ փորձառություն ունինք, մեր դրոշի տակ արդեն համախմբված է ուսուցչության լավագույն մասը, մինչդեռ բոլոր փորձերն ամստերդամցիների, վորոնք՝ Փարիզի Խնտերնացիոնալին իբրև հակակշիռ, փորձում էին համախմբվել և ստեղծել իրենց Խնտեր-

նացիոնալը: 2 տարվա ընթացքում բոլոր փորձերն անաջողությամբ վերջացան: Այս փորձերն այժմ էլ չեն դադարում, և մենք համոզված ենք, վոր այս փորձերն ապագայում ևս հավանորեն չեն իրականանալ: Յեթն ամստերդամցիներին այդ հաջողվի էլ, նրանք սրանով միմիայն կրկին անգամ կապացույցեն իրենց հերձվածողական քաղաքականությունը:

Մեր նպատակն այն է, վոր բոլոր յերկրներին լուսավորության աշխատավորների հետ միասին ստեղծենք միասնական ճակատ: Այս խնդրին մենք նվիրում ենք մեր բոլոր ույժերը և՛ մեր պայքարի ու արհմիության կազմակերպման՝ ավելի քան հինգ տարվա փորձը: Մենք մեր արտասահմանյան ընկերներին ծանոթացնում ենք մեր բոլոր նվաճումների հետ, և լուսավորության աշխատավորների խնտերնացիոնալն ի դեմս մեր ունի լավագույն ու ամենազորեղ մի զորագունդ, վորի փորձերով դաստիարակվում է ինքը: Յես համոզված եմ, վոր բոլոր թերություններով հանդերձ, վորոնք դեռ ևս գոյություն ունեն մեր միջազգային կազմակերպության մեջ, — դաստիարակչական սկզբունքների վերաբերմամբ մենք ունենք մի քանի տարակարծություններ, սակայն վերջին հաշվով այս բոլոր հարցերի մասին մենք համաձայնություն կըգանք միասնական աշխատանքի պրոցեսսի միջոցին — մեր կազմակերպությունն որեցոր ավելի ու ավելի ազդեցություն կունենա բոլոր միջազգային շարժումների վրա, լուսավորականների և ուսուցչության շրջանում: Փաստն այն է, վոր մեր այս Խնտերնացիոնալը համախմբում է արևմտյան Յեվրոպայի ուսուցչություն լավագույն մասը և ապացուցում է, վոր մենք ուժեղ ճանապարհի-

վրա յենք կանգնած: Մեր լուսավորության աշխատավորների Ինտերնացիոնալը մեծ ապագա ունի:

Այժմ մի քանի խոսք հրատարակչության մասին: Ներկայումս ենք հնարավորություն ունենք ձեզ հետ զրուցելու մեր հանդեսների ու լրագրի միջոցով: Մենք ունենք հրատարակչություն, վոր բավական հզոր ու ուժեղ է, և մեր յերկրի բոլոր հրատարակչությունների շարքում ամենաառաջին տեղերից մեկն է բռնում: Այս հրատարակչությունն ստեղծված է միության ջանքերով:

Այս ճակատում ևս մենք ունենք նվաճումներ: 1922 թվին մեր հրատարակչության շրջանառությունները 60 հազար ուրլի էյին կազմում, 1923 թվին՝ 466 հազար ու: 1924 թվին՝ 2 միլիոն: Բոլորի: Մենք այժմ ունենք „Учительская газета“ (Ուսուցչական լրագիր), վորը լույս է տեսնում 60,000 օրինակ: Մենք ունենք մի ամբողջ մանկավարժական ու արհեստակցական հանդեսների շարք, վորոնք բավարարում են մեր անդամների կրթական կարիքները: Մենք մեր առաջ խնդիր ենք դրել՝ մեր գրականությունը, լրագիրը, հանդեսները, գիրքը մոտեցնել ստորին աշխատավորներին: Մենք խնդիր ենք դրել՝ այս բոլորը մատչելի դարձնել թե արժեքով և թե բովանդակությամբ, վորպեսզի համապատասխանեն մեր աշխատավորների կարիքներին ու պահանջներին: Մենք հուսով ենք, վոր կըկարողանաք ի կատար ածել այս խնդիրները:

Ընկերներ, մենք բանվոր դասակարգի մի մասնիկն ենք և մեր ամբողջ պայքարը կապում ենք ամբողջ բանվոր դասակարգի շահերի հետ:

Մեր միությունը բոլոր աշխատավորների մի լայնածավալ կազմակերպություն է: Լուսաշխի տնե-

րում ու խմբակներում, վորոնք մեզ մոտ հազարներով են հաշվում, միությունը հնարավորություն է տալիս ծանոթանալու արհմիության և մանկավարժության բնագավառում կատարված բոլոր նվաճումների հետ, ծանոթանալու մարքսիզմի և լենինիզմի հետ, մեր զրականության միջոցով ծանոթանալու սօցիալ-տնտեսական բոլոր հարցերի հետ:

Մեր անդամների լայն դաստիարակչության այս խնդիրը մենք առաջ ենք տարել Համալուսաշխի գոյություն ամբողջ ընթացքում և կարծում ենք, վոր մեր անդամների պահանջները ճիշտ ենք հաշվի առել:

Թե ի՞նչ է լուսավորականը (просвещение)՝ արդյո՞ք նա մանր բուժուհի է, թե՞ խոշոր բուրժուա, կամ թե՞ մի ինչ վոր նրբաշերտիկ (прослойка) բանվոր դասակարգի և բուրժուազիայի միջև, այս արդեն վորոշակի ասաց ընկեր Զինովկը յերեկվա ճառի մեջ: Ամեն տարակույս փարատված է: Յեթե ուսուցիչները մանր բուրժուազիայի ներկայացուցիչներ լինեյին, նրանք չեյին կարող արհեստակցական միության մեջ կազմակերպված լինել:

Ի՞նչ է արհեստակցական միությունը: Արհեստակցական միությունը կազմակերպվում է վարձու աշխատավորներին, վորոնք վաճառում են իրանց բանվորական ուժը և վորոնք բացառապես իրենց աշխատանքի վաճառումով են ապրում: Իսկ բուրժուազիան՝ ճշմարիտ է՝ նա ևս կազմակերպվում է և կազմում քաղաքական կուսակցություններ, սակայն նա արտադրության միջոցների ու սեփականության տեր լինելով՝ անձնական հարստացման է ձգտում, նա ուրիշի աշխատանքն է շահագործում: Ուսուցիչն այս չի անում

և այս խմաստով, ընկերներ, բանվորի և ուսուցչի միջև, սոցիալական այս կատեգորիայի տեսակետից վոչ մի տարբերություն չկա: Ուսուցիչը պրոլետար է, վարձու աշխատավոր:

Այն խնդիրները, վոր միությունը դրել է իր առաջ՝ մի ամբողջ շարք տարիների ընթացքում, այժմ ինչպես դուք տեսնում եք, իրագործել երևի իրագործել է ուղիղ կերպով:

Յեղրակացության մեջ յես կասեմ, վոր յեթե մենք հետադայում ես մեր անդամների համախմբման և նրանց կրթական ու քաղաքական մակարդակի բարձրացման աշխատանքը տալու լինենք այս նույն վոգտով մենք մասսայից չեյինք կտրվիլ:

Մեր լոգունգը միշտ յեղել է՝ զգաստ ունկնդրել այն տրամադրության, վորը գոյություն ունի մեր անդամների մասսայի մեջ:

22 թվին մենք հաշվի առանք ուսուցչության մեջ յեղած տրամադրությունը: Մեր չորրորդ համագումարում մենք ասպարեպ նետեցինք «Լուսավորականների Կոմունիստական Կրթության» լոգունգը: Այժմ, ընկերներ, մենք տեսնում ենք, վոր չենք սխալվել:

Այստեղ վոչ վոք վոչ վոքի չի բռնադատում, վոչ վոք չի կամենում վոչ մեկի աչքին թող փչել: Դուք ինքներդ արդեն հասուն ժարդիկ եք և այդ ապացույցեցիք այսորվա վորոշումով:

Ահա թե ինչո՞ւ մեր միության գործը՝ լուսավորության աշխատավորների դաստիարակությունը, վերադաստիարակությունը, նրանց նյութական ու հոգեկան շահերի պաշտպանությունը, կուսակցության ղեկավարությամբ, բանվոր դասակարգի հետ միասին

մղած կռիվը նրա հետագա գործունեյության ընթացքում ել պետք է ղեկավարող լինի:

Այնուամենայնիվ մեր հիմնական խնդիրն է՝ ոգնել բանվորին և գյուղացուն, վոր նրանք կուստուրապես վեր բարձրանան: Այս խնդիրն արդեն իրագործվում եր. իրագործվում է, և յես հավատացած եմ, վոր կը շարունակվի իրագործվել ուսուցչի ձեռքով:

Մեր լոգունգը պետք է լինի հետևյալը—բոլոր անդամները պետք է լինին հասարակական ակտիվ աշխատավորներ, լուսավորական ուսուցիչը, վորտեղ ել աշխատելու լինի, պետք է հիշի—վոր ինքը «չինոմիկ» չե, այլ աշխատավոր է. նա մեր արհեստակցական մեծ ընտանիքի անդամ է, նա պետք է լինի տոկուն մարտիկ՝ բանվոր դասակարգի գործի համար, դասակարգի՝ վոր խորհրդային պետություն է կառուցում:

ԲԱՆՍԶԵՎ

ԸՆԿԵՐ ԿՈՐՈՍՏԵԼԵՎԻ ԶԵԿՈՒՅՄԱՆ ԱՌԹԻՎ

Համաժողովրդական ուսուցչական համագումարը, խելով ընկեր Կորոստելևի զեկուցումը, վորոշում է հետևյալը.

1. Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակը և իշխանության՝ բանվոր դասակարգի ձեռքն անցնելը, վորը գյուղացության հետ սերտ միություն է կնքել՝ խորտակելով լուսավորական (просвещенец) ինտելիգենցիայի միջավայրում մանր բուրժուական ցնորքները (իլլուզիաները), առաջին անգամ հնարավորություն է ստեղծեցին կազմելու լուսավորական աշխատավորների մասսակայական արտադրողական միություն, վորը կանգնած է պրոլետարիատի հեղափոխական դասակարգային սլափորմի վրա:

2. Լուսավորության աշխատավորների միությունը, վոր մյուս արհմիությունների պես համախմբել է աշխատավորների ամբողջ մասսան՝ առանց քաղաքական և կրոնական համոզումների խտրության, իբրև իրավահավասար անդամ, մտել է Ս. Խ. Հ. Մ. բանվորական արհմիությունների ընդհանուր ընտանքի մեջ:

3. Միությունը յուր հինգ տարուց ավելի տևող

գոյության ընթացքում ահագին աշխատանք է կատարել՝ Լուսավորական բանակի և ամենից առաջ ժողովրդական ուսուցչության նախկին բաժան-բաժան և ցրված բոլոր գործուսերը համախմբելու համար: Սերտ կապ հաստատելով այլ յերկրների ուսուցչության ամենից ավելի հեղափոխական մասի հետ՝ միությունը սկիզբ է դրել ուսուցչության միջազգային համախմբության:

4. Յուր ամբողջ գործունեության ընթացքում, նախ և առաջ ամբողջ բանվոր դասակարգի ընդհանուր շահերից յեկնելով և յուր մասնավոր խմբակային շահերը նրանց յենթարկելով՝ միությունն այնուամենայնիվ յուր գոյության ամբողջ ընթացքում առանձնապես հոգ է տարել լուսավորականների նյութական դրության բարելավման մասին: Լուսավորության գործի նյութական բազայի քննության միջոցին՝ յեռանդուն մասնակցություն ունենալով պետական (պլանային) մարմինների մեջ՝ միությունը միշտ պաշտպանել է, վոր պետք է ավելացնել ինչպես կրթության գործի, նույնպես և նրա աշխատավորների աշխատավարձի համար լինելիք հատկացումները: Համագումարն՝ իբրև այս բնագավառում կատարված ամենեյական նվաճումներ (достижения) նշում է մասսայական լուսավորականների և մասնավորապես գյուղական ուսուցչի նյութական դրության նշանավոր, թեև դեռ վոչ բավարար բարելավումը: Համագումարը հավանություն է տալիս գյուղի ու քաղաքի աշխատավորների աշխատավարձի հավասարեցման համար միության բռնած հաստատուն ընթացքը և աշխատավորների իրավական դրության կանոնավորման՝ առաջնակարգ

կարևորություն ունեցող՝ խնդրի նկատմամբ նրա ունեցած մոտեցումը:

5. Համագումարը ցանկություն է հայտնում, վոր ուսուցչություն նյութական և իրավական դրությունը կանոնավորելու և նրա աշխատանքը պաշտպանելու գործունեություն ընթացքում միությունն առանձին ուղարկություն դարձնի հետևյալ հարցերի վրա.

Աշխատանքի վարձատրությունը իր ժամանակին վճարելու ապահովություն:

Կռիվ՝ աշխատավորների չհիմնավորված և անժամանակ արձակուրդների և տեղափոխությունների դեմ:

Ստուգումների՝ (проверком) իբրև մասնավոր ստուգման մարմինների՝ վերացման շուտավույթ կիրառում:

Ուսուցչին անհրաժեշտ հանգստի ու ժամանակի ապահովում՝ դպրոցական և հասարակական աշխատանքի պատրաստվելու համար:

Անհրաժեշտ աշխատանքով ապահովում ուսուցչին ու այն աշխատավորների կատեգորիային, վորոնց վրա դեռևս չի տարածված կենսաթոշակային ապահովումը:

Պաշտպանություն ուսուցիչ-մայրերի շահերի՝ դպրոցական և հասարակական աշխատանքների բաշխման միջոցին:

Գործազուրկների ոգնություն ու ժողովուրդ:

Միութենական սանատորիաների, հանգստյան տների, հաշմանդամների տների կառուցում:

Ոժանդակություն աշխատավորների դավանների կրթության և գյուղություն՝ իրենց աշխատավորներին բարձրագույն դպրոց մտնելու համար:

6. Առանձնապես եյական նշանակություն է ստա-

ցել միություն կուլտուր-լուսավորական աշխատանքը վերջին տարիներում: Այս բնագավառում միությունն իր առաջ մի խնդիր է դրել, վոր ամբողջովին զուգահեռվում է քաղաքական մոմենտի հիմնական պահանջներին և միություն հիմնական մասնային՝ աշխատանքային դպրոցի ուսուցիչների միջև ստորին շերտերի լայնածավալ շարժմանը: Այդ խնդիրն է՝ գյուղական և քաղաքային ուսուցչություն լայն մասսաները ներս քաշել, լծել ու ժողովրդավար աշխատանքի, վոր կոմունիստական վոգով առաջ տանեն իրենց քաղաքական դաստիարակությունը, արհեստակցական նախատառքաստությունը և մանկավարժական ինքնավարացումը: Կոմունիստական բաղձնակոմանի լուսավորության հիմքի վրա ծավալվեց ուսուցչի լայն հասարակական կուլտուրական աշխատանքն ինչպես դպրոցում, այնպես և նրանից դուրս՝ շրջապատող աշխատավոր բնակչության միջավայրում: Այս աշխատանքն առանձին նշանակություն ստացավ գյուղում, վորտեղ գյուղական ժողովրդական ուսուցիչը քաղաքի ու գյուղի կուլտուրական զորման (СМЫСЛА) ամենակարևոր ազդեցությունն էր մեկը և բանվոր դասակարգի ու գյուղացության միություն ամբապնդման գործում՝ ակտիվ ոգնականն է:

7. Լուսավորության աշխատավորների միությունը մեծ չափով ոգնություն է ցույց տալիս այս աշխատանքին՝ ակտիվ մասնակցելով ուսուցչության քաղաքական և մանկավարժական դաստիարակության կազմակերպման գործին, արհարդագանդայի կազմակերպություն, հարկավոր գրականություն, հանդեսների, լրագրի հրատարակություն, միութենական բժշկություն գրականություն մատակարարելով և այլն:

Սակայն հաջողութիւններն այս բնագավառում գեոևս հեռու են այն բանից, վոր կարելի լինի նրանցով գոհ լինել և հանգիստ նստել: Մինչև այժմ հասարակական աշխատանքը, մանավանդ գյուղում, տարվում է ուսուցչի ձեռքով առանձնակի, տնայնորեն, և այս հանգամանքը տանում է դեպի մի շարք աննորմալ յերևույթներ, վորոնք արգելակում են (ТОРМОЗЯТ) աշխատաքը: Գյուղում ուսուցչի ձեռքով կատարվող դանադան տեսակի հասարակական աշխատանքի կանոնաւորման բացակայութիւնը, գյուղական կուսըջիջները, բջիջների, կոմսոմոլի ու գյուղական խորհրդային ժարմինների տնրավարար համաձայնութիւնը միության հետ՝ աշխատանքի բաշխման և սահմանադրման (размежевание) վերաբերմամբ՝ յերբմն խանգարում են հարմար կերպով ողտագործել հասարակական ուսուցչի ուժերը և պատճառ են լինում, վոր ուսուցիչը ծանրաբեռնվում է հասարակական աշխատանքով և վնաս գպրոցական աշխատանքի:

8. Գյուղում միության խկապես հզոր և համաձույլ բջիջներ կազմելը միայն կողնի վերացնելու վերև նշված անցանկալի յերևույթները: Գավառակային (ВОЛОСТНЫЙ) բյուղջիւի ասպարեղ գալը, գավառակային քաղաքական-լուսավորչական կենտրոնի կազմակերպումը միության առաջ դնում են ներկա մոմենտում կարեւորագույն մի խնդիր—ձիւ թափել միութենական գավառակային ուժեղ և հեղինակավոր կուլիկիով ստեղծելու, վորը և կողնի գյուղական ուսուցչությանը՝ գավառակային մասշտաբով լծվելու լուսավորության գործի կազմակերպությանը, սահմանադեկու և կապակցելու յուր աշխատանքը գյուղի

խորհրդային կուսակցական և այլ կազմակերպութիւնների աշխատանքի հետ և պլանաչափորեն բաշխելու կուլիկիով կուլտուրական ուժերը:

9. Միութենական ստորին շերտերի ուժեղ բջջի ստեղծելը յուր հերթին պահանջում է միության բոլոր անդամներից զորեղ ուշադրութիւն դեպի իրենց արհեստակցական կազմակերպութիւնը. յուրաքանչյուր անդամից աշխատանք է պահանջում՝ բարձրացնելու յուր արհեստակցական գիտակցութիւնը և ակաիվ մասնակցութիւնը միության աշխատանքին: Պետք է առանձին ուշադրութիւն դարձնել, վոր ուժեղացվի միության գավառային և շրջանային մարմինների աշխատանքը և նրանց ձեռքով կատարվող տեղերի աշխատանքի ղեկավարութիւնը:

10. Ուսուչության մեջ կեսից ավելին կանայք են հաշվվում, վորոնք պետք է ավելի մեծ դեր կատարեն, քան մինչև այժմ: Այն հանգամանքը, վոր միութենական և կուլտուր հասարակական աշխատանքին կանայք ավելի թույլ են լծվում, սպառնում է հետագայում միության աշխատանքը զրկել այն թափից, վոր հայտնաբերվից վերջին տարիներում: Անհրաժեշտ է ամեն կերպով կանանց ակտիվութիւնը բարձրացնել՝ նրանց սիստեմատիկորեն դեպի միության աշխատանքը գրավելով և արհեստակցական ու հասարակական աշխատանքի մըղելով:

11. Միության ամենակարեւոր խնդիրներից մեկը դանադան ազգութիւնների լուսավորության աշխատավորների (առաջին հերթին՝ ուսուցչության) միութենական ինքնագործունէկութիւնն ու ինքնագիտակցութիւնը բարձրացնելն է: Այս նպատակի համար

միութենական կազմակերպությունները պետք է բոլոր ազգերի ուսուցչությունը լայն չափով զբաղեն գործնական աշխատանքի և սխառնություն, նախապատրաստեն նրանցից միութենական աշխատավորների հիմնագնդեր (кдары):

12. Համագումարն անհրաժեշտ է համարում, լուսավորության աշխատավորների մասսաներին լայն չափով պարզաբանել գյուղական ուսուցչության խնդիրները, ուսուցչություն, վորը կոչված է պատասխանատու աշխատանք կատարելու ամբողջ բանվոր դասակարգի շահերի համար: Սակայն քողաքային ուսուցչության արտադրողական կուլտուրական աշխատանքի խնդիրներն էլ պակաս նշանակություն չունեն: Կուլտ շեֆություն կարգով Կարմիր բանակի բավարարումը, նախագորակոչայինների մեջ անդրադարձություն վերացումը, պիրոներների հետ կատարվող աշխատանքը, բանվորական ու յերիտմիութենական ակումբներից ոգնելը, Լուսաշխի տներում գյուղական ուսուցչության կուլտուրական կարիքների ու պահանջների բավարարումը բոլոր այս խնդիրները պետք է իրագործվեն՝ քաղաքային ուսուցչության լայն մասսաներն աշխատանքի կոչելով: Անհրաժեշտ է ամեն կերպով բարձրացնել քաղաքային ուսուցչի ակտիվությունը՝ միութենական կազմակերպությունների միջոցով ֆաշելով նրան գործնական և կուլտուրական աշխատանքի մեջ և մշտական կապ ու փոխադրեցություն հաստատելով նրա և գյուղական ուսուցչության միջև:

13. Իբրև միութեան ամենակարևոր խնդիրներից մեկը՝ պետք է զբաղվի հետևյալը՝ կազմակերպել լայն գործնական ոգնություն գյուղական և քաղաքային ու-

սուցչությունը՝ նրա ինքնազարգացման և հասարակական—կուլտուրական աշխատանքի ասպարիզում ուսուցչությունը—առանձնապես գյուղական ուսուցչությունը—արտոնյալ կերպով մատակարարել զանազան ազգությունների լեզուներով հրատարակված համապատասխան գրականության միություն «Работник просвещения» հրատարակության կողմից լուսավորականների համար ընդարձակ վարկ բանալ, լայն չափով կրթական եքսկուրսիաներ կազմակերպել ղեպի կուլտուրական կենտրոնները և այլն: Հենց այս նպատակով էլ պետք է ձեռք առնվեն բոլոր միջոցները՝ միութենական կուլտֆոնդերն ու ժեղացնելու համար:

14. Համագումարը ցանկություն է հայտնում, վոր միութեան 5-րդ համագումարի կողմից քննություն առնվի՝ լուսավորության աշխատավորների համար՝ Մոսկվայում կենտրոնական այնպիսի տուն կառուցելու հարցը՝ վորը կարողանա լայն ու հանրակողմանի բավարարել՝ կրթական նպատակներով Մոսկվա յեկող բազմաթիվ աշխատավորներին և յուր մեջ կենտրոնացնի միութենական կուլտուրայի կենտրոնական հիմնարկները:

15. Վերջին ժամանակ ավելի ու ավելի է ծավալվում ուսուցիչ-թղթակիցների ցանցը՝ գլխավորապես «Учительская газета»-ի շուրջը: Միութենական մարմիններ ամեն կերպ պետք է պաշտանեն այս արժեքավոր շարժումը՝ նրա մեջ գրավելով ավելի ու ավելի մեծ թվով ուսուցիչներ: Թղթակցման նպատակը պետք է լինի միջ միայն «Учительская газета»-ին և Արհմիությունը՝ բավարարելը, այլև ուսուցչության աշխատանքի հետ կապված հարցերը տեղական մամուլում լուսաբանելը:

16. Համագումարն առանձին բավականությամբ նշում է միության կապը Լենինյան կոմսոմոլի հետ՝ միութենական մարմինների մեջ մասնակցող նրա ներկայացուցիչների միջոցով: Համագումարը հաստատ համոզված է, Վոր միության՝ վերից վար, բոլոր կազմակերպությունների մեջ ՌԼԿՅՄ-ի հետ ունեցած սերտ կապն ու հարթ հարաբերությունը կընպաստի կարգավորելու տեղ-տեղ պատահող ընդհարումները և ուսուցչությունն ու կոմսոմոլի միջև վոչ լրիվ հարաբերությունը: Սրա հետ միաժամանակ համագումարն ուշադրություն է դարձնում ապագա ուսուցիչների՝ Մանկտեխնիկումներում և Մանկերաձուլչիմ-երում (ПЕД.В.У.З.) սովորողների արհեստակցական դաստիարակության անհրաժեշտությունը վրա, այլ և ուսանողական սկզբիաների ու ՌԼԿՅՄ կազմակերպությունների միջև սերտ կապ հաստատելու վրա:

17. ՌԿԿ (Բ) 13-րդ համագումարը նշել է լուսավորության աշխատավորների միության ու նրա հիմնական մասսայի՝ ուսուցչություն անողին նշանակությունը: Միությունն ամեն ժամանակ անշեղ ընթացքով հետևել է ամենասերտ մերձեցում առաջ բերելու լուսավորական մասսայի և բանվոր դասակարգի առաջադան կուսակցություն միջև: Իսկ կուսակցությունը մեծ ուշադրություն է ցույց տվել միությանը և ուսուցչությունը: Կոմմունիստական կուսակցության գաղափարական ղեկավարությունը՝ լուսաշխի միությունը կոմմունիզմի իսկական գաղափարի և վերածվել: Ուսուցչական մասսաները միության միջոցով մոտեցել են նաև բանվոր դասակարգին՝ զբաղվելով իրենց տեղը կազմակերպված պրոլետարիատի շարքերում:

18. Լուսավորության աշխատավորների խնտեր-նադիտակը, Վորի մեջ կարևոր դեր է կատարում մեր միությունը, համախմբում է բոլոր յերկրների առաջավոր ուսուցչություն լավագույն մասը: Միությունը յուր Արհմիութենական շինարարություն և միասնական կովի հարուստ փորձառությունը, Վոր ձեռք է բերվում բանվորական դասակարգի ընդհանուր շարքերում, յուր արտասահմանյան ընկերների սեփականություն և դարձնում: Մեր ուսուցչություն շարժման անցյալ սխալներն ու այժմյան նվաճումներն աչքի առաջ ունենալով կապիտալիստական յերկրների հաղարավոր ուսուցիչներ են ուսանում: Մեր յուրաքանչյուր, նույնիսկ փոքրիկ, հաջողությունը զորեղ հենարան և ծառայում մեր գործակից յեղբայրներին՝ բուրժուազիայի դեմ մղված կովում:

19. Համամիութենական ուսուցչական համագումարը կոչ է անում Ս. Ս. Հ. Մ. ուսուցչությունը՝ միահամուռ և ակտիվ աշխատանքի լծվել՝ յուր միության հետագա ամրապնդման համար: Համագումարը հայտնում է, Վոր ուսուցչությունը լուսավորության աշխատավորների արտադրական միության շարքերում և Ռ. Կ. Կ. գաղափարական ղեկավարության տակ միայն կարող կրկնի ի կատար ածել այն վիթխարի խնդիրները, Վոր նրա առաջ է դրել մեր պատմական մեծ գաղաշխարհ:

ՀԱՅԿԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀՀ Ազգային գրադարան



NL0231209

47.190

ԳԻՆԸ ՁԵ ԿՈՊԵԿ